ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Ширакский центр арменоведческих исследований НАН РА
Shirak Centre of Armenological Studies NAS RA

ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ НАУЧНЫЕ ТРУДЫ SCIENTIFIC WORKS

ՀԱՏՈՐ ВЫПУСК EDITION 28 2025 № 1

ԱՐՎԵՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ART STUDIES

ՀՏԴ՝ 7.072.2
DOI: 10.52971/18294316-2025.28.1-210

ԼԵՆԻՆԱԿԱՆՈՒՄ ԱՊՐԱԾ ՈՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՆԿԱՐԻՉՆԵՐԸ. ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ, ՊԵՏՐՈՍ ԿՈՆՏՈՒՐԱՋՅԱՆ, ՆՎԵՐ ՍԱՖՅԱՆ

Արաքս Վ. Մարգարյան

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղ
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, Գյումրի, ՀՀ

Ամփոփում

Նախաբան. Դիտարկվել է 1950-1960-ականներին Լենինականում ապրած ու ստեղծագործած հայրենադարձ գեղանկարիչների՝ Հակոբ Հակոբյանի, Պետրոս Կոնտուրաջյանի, Նվեր Սաֆյանի ստեղծագործությունը, որոնք, վերադառնալով հայրենիք, մեծ նպաստ բերեցին հայ մշակույթի զարգացմանը: Հայրենադարձների խնդրին անդրադարձել է Ռ. Միրզախանյանը իր «Խորհրդահայ մշակույթը 1956-1990թթ.» աշխատությունում: Պ. Կոնտուրաջյանի, Հ. Հակոբյանի ստեղծագործությունը բազմիցս ներկայացվել է արվեստաբանների կողմից, այդ թվում՝ Հ. Իգիթյանի, Շ. Խաչատրյանի: Ն. Սաֆյանի մշակութային գործունեությանը առաջինը մենք ենք անդրադառնում սույն աշխատանքի համատեքստում: *Մեթոդներ ու նյութեր,* Դիտարկվել են երեք հայրենադարձ ստեղծագործողներ, որոնք հաստատվելով նախնիների հողում՝ սկսեցին արարել տեղացի նկարիչների հետ: Հետազոտությունն արվեստաբանական է, ներկայացված է համեմատական ու վերլուծական մեթոդներով: *Վերլուծություն.* Փորձ է արվել բացահայտելու նկարիչների կենսապայմանները, աշխարհայացքը, արվեստի զարգացման նրանց տեսլականները, ծավալած գործունեությունը, թե որքանով էին սոցռեալիզմի կաղապարները կաշկանդել կամ արգելափակել ստեղծագործողներին: *Արդյունքներ.* Մեր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք այն եզրահանգման, որ սահմանափակ հնարավորություններով Լենինականում էլ կարելի էր գտնել սեփական ուղին ու ձեռագիրը կամ, ինչպես կասեր ճարտարապետ Ա. Իվանովը, «Ազատությունը վանդակի մեջ» [5, 76]:

Բանալի բառեր՝ *հայրենադարձ, քաղաքական հալածանքներ, սփյուռք, Հակոբ Հակոբյան, Պետրոս Կոնտուրաջյան, Նվեր Սաֆյան, Լենինական, կերպարվեստ:*

Ինչպես հղել՝ Մարգարյան Ա. *Լենինականում ապրած ու ստեղծագործած հայրենադարձ նկարիչները. Հակոբ Հակոբյան, Պետրոս Կոնտուրաջյան, Նվեր Սաֆյան* // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի: Հ. 1(28): 210-217 էջեր: DOI: 10.52971/18294316-2025.28.1-210

REPATRIATE ARTISTS LIVING AND WORKING IN LENINAKAN: PETROS KONTURAJYAN, HAKOB HAKOBYAN, NVER SAFYAN

Arax V. Margaryan
Armenian Academy of Fine Arts, Gyumri Branch
Shirak State University after M. Nalbandyan Gyumri, RA

Abstract
Introduction: The paper examines the works of repatriated painters of Hakob Hakobyan, Petros Konturajyan, and Nver Safyan, who lived and worked in Leninakan, Gyumri, in the 1950s and 1960s, and who, upon returning to their homeland, made a great contribution to the development of Armenian culture. The issue of repatriates was addressed by R. Mirzakhanyan in his work "Soviet Armenian Culture 1956-1990." The work of P. Konturajyan and H. Hakobyan has been repeatedly presented by art critics, including H. Igityan and Sh. Khachatryan. We are the first to address N. Safyan's cultural activities in the context of this article. We also examine the activities of repatriated painters in Leninakan, which will complete the cultural image of the city in the 1950s and 1960s. *Methods and materials:* In our article, we have considered three repatriated artists who, upon returning to their homeland, settled in the land of their ancestors and began to create with local artists. The research is artological, presented using comparative and analytical methods. *Analysis:* We have tried to reveal the living conditions of the artists, their worldviews, their visions of the development of art, their activities, and to what extent the templates of socialist realism constrained or blocked the artists. *Results:* As a result of our study, we have come to the conclusion that with limited opportunities in Leninakan, one could find one's own path and handwriting, or, as the architect A. Ivanov would say "Freedom in a Cage" [5, 76].
Key words: *repatriation, political persecution, diaspora, Hakob Hakobyan, Petros Konturajyan, Nver Safyan, Leninakan, fine arts.*
Citation: Margaryan A. *Repatriate Artists Living and Working in Leninakan:Hakob Hakobyan, Petros Konturajyan, Nver Safyan* // "Scientific Works" of the SHCAS of NAS RA. Gyumri: V. 1(28): 210-217 pp. DOI: 10.52971/18294316-2025.28.1-210

ՆԱԽԱԲԱՆ. «Սոցիալիստական դրախտավայրի» [1, 246] մտապատկերով խաբված բազմահազար հայրենադարձներ, ռոմանտիկ մղումով համակված, եկան հայրենիք: Երկրորդ համաշխարհայինում հաղթանակած երկիրը հեռվից թվում էր հույսի ու լույսի փարոս: Սակայն հայրենիքը դեռ պատրաստ չէր ընդունելու իր բազմաթիվ տաբրագիր զավակներին: Բարգավաճ ու զարգացած երկրներից գաղթած հայորդիները հայտնվեցին խոր հիասթափության մեջ. քաղցը, հետպատերազմյան տարիների անհարմարավետ կյանքը մի կողմից, քաղաքական հալածանքները՝ մյուս կողմից, շուտով փշրեցին հայրենիքում կայանալու այն ողորկ հույսերը, որ կային հայրենադարձների

մեջ: Նրանց մի մասը շուտով աքսորվեց Սիբիրի խորքերը՝ մատնվելով անխուսափելի կորստյան: Քչերին հաջողվեց դիմակայել ու արմատներ ձգել հայրենի հողում:

ՊԵՏՐՈՍ ԿՈՆՏՈՒՐԱՋՅԱՆԸ (1905-1956)՝ Եղեռնի տարիներին ծնողներին կորցրած ու մանկությունը որբանոցում անցկացրած նկարիչը, Ֆրանսիայից Խորհրդային Հայաստան տեղափոխվելուց հետո 1947-1951թթ. ապրել և ստեղծագործել է Լենինականում: «1947թ. սոցիալիզմի սիրուն համար ես հրաժարվեցի իմ թանկագին հարազատներիցս ու մենմենակ ներգաղթեցի Հայաստան», - գրել է նա [2, 10]: Հետպատերազմյան Լենինականը, ինչ խոսք, բարեկեցության կենտրոն չէր: Բայց նկարիչն ապրում էր, հարմարվում զարմանալի քաղաքի կյանքին: Լենինականը Փարիզ չէր: Լենինականը Փարիզ չէ՛ր, սակայն գերիչ էր իր առանձնահատկությամբ. երկհարկանի սրբատաշ տուֆով կառուցված քաղաքում վեր էին խոյանում նշանավոր եկեղեցիներ: Քաղաքը շնչում էր արհեստներով, թատրոնով ու արվեստով: Լենինականը նաև մշակութային օազիս էր, տաղանդների հանգրվան:

Համեստ, ազնիվ Կոնտուրաջյանը աշխատում է Մռավյանի անվան թատրոնում և դասավանդում միջնակարգ դպրոցում՝ հայրական հոգատարությամբ վերաբերվելով իր սաներին: Ֆրանսիական արվեստին քաջածանոթ՝ նա իր սաներին բացատրում էր տարբեր նկարչական տեխնիկաներ, տանում էտյուդների, ծանոթացնում կերպարվեստի պատմությանը: 1949-ին Կոնտուրաջյանն ամուսնանում է ուսուցչուհի Գայանե Սահակյանի հետ: Ծնվում է դուստրը՝ Սիրվարդը:

Խոսելով Կոնտուրաջյանի արվեստի մասին՝ Հ. Իգիթյանը օգտագործում է «մաքուր», «վճիտ» բառերը: Դրանք չեն ձգտում «հատուկ կարևորության թեմաների», ոչ էլ նորարարարության հավակնություն ունեն: Գործերի մի մասը արված է թղթի, ստվարաթղթի, տախտակի երկու երեսների վրա: Դրանք անշտապ, հանգիստ, մեծ ազնվություն ու կյանքի հանդեպ անկեղծ վերաբերմունք պարունակող գործեր են, որոնց մեջ խտանում է յուրօրինակ մենություն ու լռություն: Կոնտուրաջյանի կտավները՝ Լենինականում նկարչի ստեղծած առաջին աշխատանքները, իրենց կապտաարծաթավուն երանգավորումով հիշեցնում են ֆրանսիական շրջանի գործերը: Օրինակ՝ ձկներով նատյուրմորտում պատկերված է ջրաման, ափսեի մեջ դրված ձկներ, ծլած սոխ, բաժակով ջուր ու հաց: Ռիթմիկ գծանկարը դիտողի հայացքը սահեցնում է մի առարկայից մյուսին՝ հիշեցնելով հետպատերազմյան կյանքի աղքատիկ օրերը: Լենինականում ապրելիս նկարիչը վրձնել է նաև ճարտարապետական հուշարձաններ՝ «Մարմաշենի վանքը», «Լմբատավանքը» [2, 9] որոնք, սակայն չեն պահպանվել:

Կոնտուրաջյանի աշխատանքները խոսում են գեղանկարչական բարձր վարպետության, ճաշակի ու ինքնատիպության մասին: Ցավոք, նկարչի և նրա ընտանիքի դրամատիկ վախճանը կասեցրին նրա արվեստի հետագա զարգացումն ու գրեթե աննկատ թողեցին տաղանդավոր նկարչի գործունեությունը:

ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԸ (1923-2013) ծնունդով Ալեքսանդրիայից էր: Միգուցե իր ծննդավայրի անվան նմանությունն էր Ալեքսանդրապոլին, որը մոգական ուժով ձգեց նկարչին՝ մի քանի տարի ապաստան ու ստեղծագործական ոգեշնչում տալով նրան: Հատկանշական է, որ մինչև Հայաստան գալը Հակոբյանը ոչ մի բնանկար չէր արել: Ինչ-

պես նկատում է Իգիթյանը. «Այդ շրջանում նրա արվեստն առավելապես ներփակ, կամերային բնույթ է ունեցել: Նրա ողջ կյանքը, խոհերը, որոնումները սահմանափակվել են սենյակի չորս պատերով, ուր կուտակվել են պոտենցիալ մեծ հնարավորություններ պարունակող նրա գործերը, հնարավորություններ, որ դրսևորվեցին հայրենիքում» [1, էջ 268]: Հակոբյանի առաջին ծանոթությունը Լենինականին երկուստեք դարձավ որոշիչ ու ճակատագրական. «Երբ հասանք Լենինական, չորս աչք դարձած՝ նայում էի, թե Լենինական քաղաքի մեջ որևէ նկարելու բան կա՞ր ինձ համար:... Տեսա տուֆակերտ, հին, սև Լենինականը: Քարքարոտ այդ տուները, որ տեսա, ասի՝ ուրեմն ես այստեղ նկարելու բան ունեմ: Առաջին օրն իսկ, Լենինականում գնացի նստեցի փողոցի վրա և սկսեցի նկարել» [3, էջ 12]:

Այստեղ նա դարձավ հայկական բնաշխարհի նորօրյա երգիչը՝ բացահայտելով նրա գողտրիկ, բայց մոնումենտալ գեղեցկությունը: Լենինականում ապրած տարիներին նկարիչը ստեղծեց «բացառիկ ամփոփ ու ամբողջական» [1, էջ 268] նկարների շարք:

Քաղաքը բյուրեղացրեց նրա մտածողությունը, հասցրեց ձևի ծայրահեղ պարզեցմանը: Իր լավագույն բնանկարներում՝ «Փողոց Լենինականում», «Լենինական. Կիրովի փողոց», «Բակ», «Ուշ աշուն»,«Վաղ գարուն» նկարիչը հասնում է բացառիկ ընդհանրացման: Նա, ասես, բացահայտում է քաղաքի ու նրա գողտրիկ փողոցների մետաֆիզիկական լռությունն ու մոնումենտալ գեղեցկությունը: «Դարպասներ» բնանկարում կտավը ձեռք է բերում տարածություն և զարգացնում է հեռանկարի պատրանքը: Խաղաղ փողոց, դեպի հեռուն գնացող և անսպասելիորեն հեռագրասյունի «դեմ առնող» տնակներ, որոնք զարմանալի ճշգրտությամբ պատկերում են քաղաքի բնույթը: «Ի վերջո, կարևորը ոչ միայն քաղաքի գրավիչ կողմերն են, այլ այն, որ այստեղ գործ ունենք սովորական անշուք տնակներից, չոր ծառերից ու հեռագրասյուներից գեղեցկություն հյուսող նկարչի հետ» [1, էջ 268]: Կտավների գունաշարը հիմնված է դարչնականաչավուն երանգների ու գծային ռեֆլեքսների համադրության վրա: Իգիթյանը այս կոմպոզիցիաները համարում է «բնօրինակի աբստրահում՝ ոչ թե խախտելով ձևը, այլ ազատելով կողմնակի առարկաներից, բեռնաթափելով բոլոր կարգի ավելորդություններից»[1, էջ 268]:

Նրա բնանկարներում չկան մարդիկ. տիրում է մետաֆիզիկական լռություն: Եվրոպական արվեստին քաջածանոթ նկարիչը, ասես, երկխոսում է Կիրիկոյի հետ, դատարկության միջոցով ցույց տալիս քաղաքի խորհրդավոր լռությունն ու միստիկ էությունը: Սակայն ի տարբերություն Կիրիկոյի վառ գույների, Հակոբյանն օգտագործում է նրբերանգներ, տոնային անցումներ, մեղմ գունաշար:

ՆՎԵՐ ՍԱՖՅԱՆ /ՀԱԿՈԲՅԱՆ/ (1939). Ծնվել է Իրաքի Գերկուկ քաղաքում՝ Հակոբյանների ընտանիքում: Հայրն ու եղբայրները ներգրավված էին Գյուլբենկյանների նավթարդյունաբերական ընկերությունում: Ծնողները, լինելով մեծ հայրենասերներ, Մերձավոր Արևելքում աղջկան տվել են հայեցի դաստիարակություն: Նվերը սովորել է տեղի Խրիմյան Հայրիկի անվան 10–ամյա հայկական դպրոցում, հետո՝ Բաղդադի ամերիկյան 12–ամյա օրիորդաց դպրոցում: 1960թ-ից հաճախել է Բաղդադի արվեստների բարձրագույն ակադեմիա, որտեղ դասավանդել են Փարիզից ժամանած վարպետներ: Արևելքում կին նկարչուհին բացառիկ երևույթ էր: Նվեր Հակոբյանը, որ կուրսի միակ

աղջիկն էր, աչքի էր ընկնում բացառիկ ունակություններով ու տաղանդով։ Բեյրութում նա գեղանկար էր դասավանդում, երբ տեղի է ունենում հանդիպում խորհրդահայ նկարիչների պատվիրակության անդամների՝ Տ. Չախմախչյանի և Հ.Ռուխկյանի հետ։ Ռուխկյանը, վերադառնալով, նամակ է գրում Նվերին՝ հրավիրելով Հայաստան գեղարվեստական կրթություն ստանալու։ Ու թեև Նվերը միաժամանակ ընդունվել էր Մերձավոր Արևելքի 2 բուհերն էլ՝ Բեյրութի համալսարանն ու Բաղդադի բարձրագույն ակադեմիան, որոշում է հայրենադարձվել և ուսումը շարունակել մայր հայրենիքում։ Հավանաբար, աղջիկը փորձել է տեր կանգնել հոր երազանքին, քանի որ հայրը ողջ կյանքում տենչացել էր վերադառնալ հայրենիք, ինչը նրան չէր հաջողվել։ 1964 թ. Նվերը Հայաստանում է. նա դառնում է գեղարվեստաթատերական ինստիտուտի առաջին հայրենադարձ ուսանողուհին։ Բուհի պրոռեկտորը իմանալով, որ նա ընդունվել է նաև երկու այլ բուհեր, զարմացած հարցրել էր. «Աղջի՛կ ջան, ինչո՞ւ ես եկել Հայաստան» [5]։ Նվերը պատասխանում է. «Եկել եմ իրապաշտական նկարչություն սովորելու»։ Նվերին տրամադրվում է հանրակացարանի սենյակ, 90 ռուբլի կրթաթոշակ, որը մեծ գումար էր համարվում Խորհրդային Հայաստանում։ Նրան առաջարկվում է բաժինն ընտրել իր հայեցողությամբ։ Եվ Նվերը նախընտրեց ինստիտուտի նորաբաց՝ ձևավորման բաժինը, որտեղ սովորում էին 4 աղջիկներ (բոլոր մյուս կուրսերում սովորում էին միայն տղաներ)։

Կյանքը հետզհետե ընկնում էր հունի մեջ. շփվող ու բարյացակամ աղջիկը բոլորի հետ ընդհանուր եզրեր է գտնում, երբեք չի տրտնջում, չի դժգոհում Խորհրդային խղճուկ ապրելակերպից։ Անգամ Բեյրութի հյուպատոս Նորայր Ավետյանին շնորհակալություն է հայտնում Խորհրդային Միությունում իր ուսումնառության համար։ Եվ այդ բնավորության համար էլ նրան բացառություններ են արվում. թույլ է տրվում ամեն ամառ ճանապարհորդել, լինել արտասահմանյան երկրներում, ինչը չլսված բան էր այն տարիներին։ Շնորհիվ իր բազմաթիվ ազգականների ու բարեկամական կապերի՝ նա այցելում է Փարիզ, Լոնդոն, Կոպենհագեն, Աթենք, Մյունխեն, Բեռլին... Մի քանի տարում նա լինում է Եվրոպայի լավագույն քաղաքներում, ամենուրեք այցելում թանգարաններ, մշակութային օջախներ։ Հատկապես տպավորիչ էր Փարիզ կատարած ուղևորությունը, որը արվեստասեր աղջկա համար իսկական բացահայտում էր։ Միայն 13 անգամ նա այցելում է Լուվր։ Հորեղբոր աղջկա՝ Վերժինեի հետ, որը համարվում էր Փարիզի երրորդ վիտրինիստը, լինում է Քրիստիան Դիորի նորաձևության տանը, որը կախարդական աշխարհ էր հիշեցնում ձևավորողի մասնագիտություն ընտրած և նորաձևությունից հեռու խորհրդային իրականության մեջ ապրող աղջկա համար։ Նվերը իրեն նվիրած SHWARC սարքով Էյֆելյան աշտարակից նկարահանում էր տեսարաններ Փարիզյան կյանքից ու առօրյայից։ Փարիզի մասին պատմող այդ փոքրիկ ֆիլմը տեսել ու շատ էր հավանել քանդակագործ Արա Սարգսյանը։

Ամեն անգամ, վերադառնալով Հայաստան, նա կիսվում էր տպավորություններով, հուշերով։ Հայաստանը նա սիրեց ողջ էությամբ։ Ու թեև աղքատիկ և դժվար տարիներ էին, սակայն՝ մեծերի բույլով լեցուն ժամանակներ։ Ճանաչողական այցով գեղարվեստաթատերական ինստիտուտ էին գալիս լավագույն մտավորականները։ Հ. Շիրազի հետ հանդիպման ժամանակ աղջիկը տարել էր բանաստեղծի լուսանկարը, որը Շիրա-

զը մակագրեց. «Նվեր՝ Նվերին»: Նա համակուրսեցիների հետ զբոսնում էր, հաճախ այցելում օպերա, կինո: Սակայն Նվերին նախ և առաջ հետաքրքրում էր նկարչությունը: Նա պատկանում էր այն բախտավոր սերնդին, ում ճեպանկար է դասավանդել Վռամշապուհ Շաքարյանը, իսկ գծանկար ու գունանկար՝ Մասիս Գրիգորյանն ու Գրիգոր Աղասյանը: Երբ գեղարվեստաթատերական ինստիտուտի ուսանողների հետ հանդիպման է գալիս Մարտիրոս Սարյանը, նա նկատում է ալ կարմիր բաճկոնով Նվերին ու ցույց տալով նրան՝ ասում է. «Ինքը արև է, ինքը մնալու է այստեղ»: Մեծ Սարյանի խոսքերը դառնում են կանխատեսական. բոլոր սփյուռքահայ ուսանողուհիներից միայն Նվերն է մնում և ընտանիք կազմում Հայաստանում: Երկրպագուները շատ էին, բայց երբ երևան եկավ լենինականցի փեսացու Յուրի Սաֆյանը, որ բանասեր էր, դասավանդում էր Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում. ամեն ինչ հանգուցալուծվեց շատ արագ ու բնականոն: Նրանց ծանոթությունը տեղի ունեցավ 1968թ. մարտի 8-ին: Մի քանի հանդիպումից հետո փեսացուն անձեռոցիկի վրա ջնջեց Նվերի հայրական ազգանունը՝ Հակոբյան, ու ավելացրեց իրենը՝ Սաֆյան:

Երբ վրա հասավ Նվերի (այսուհետ՝ Սաֆյան) դիպլոմային աշխատանքի պահը, նա արդեն սպասում էր իր առաջնեկին: Սակայն այդ հանգամանքը չխանգարեց աղջկան անգլիական կողպեքով փակել իր արվեստանոցի դուռն ու դուրս չգալ այնքան ժամանակ, մինչև ավարտին կհասցներ 3 տարբեր աշխատանքներ: Նվերը առաջինն իր աշխատանքները ցույց տվեց հայտնի արվեստաբան Եղիշե Մարտիկյանին, որն արդեն տարեց էր ու դժվարությամբ բարձրանալով չորրորդ հարկ՝ ուշադիր դիտեց աշխատանքն ու բարձր գնահատեց այն: 1969թ. Սաֆյան Նվերը ավարտում է ինստիտուտը և ամուսնու հետ բնակություն հաստատում Լենինականում, որտեղ զբաղվում է ստեղծագործությամբ և մանկավարժական գործունեությամբ...

Նվեր Սաֆյանը երկար տարիներ դասավանդել է Լենինականի (Գյումրու) երեք բուհերում: Ամենուրեք, նաև նկարչական դպրոցում՝ կրթելով, նկարչություն սովորեցնելով, ճաշակ ձևավորելով տասնյակ պատանիների ու աղջիկների մեջ: Որտեղ էլ աշխատում էր Սաֆյան Նվերը՝ Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտում, Երևանի Գեղարվեստի ակադեմիայի Գյումրու մասնաճյուղում, նրա շուրջ տիրում էր ստեղծագործական բեղուն մթնոլորտ. իր սաներին նա փորձում էր փոխանցել այն ամենը, ինչ տեսել էր, սովորել Եվրոպայում, Մերձավոր Արևելքում: Նա միշտ ստեղծագործական գործընթացի մեջ էր, ակտիվ մասնակցում էր հանրապետական և միութենական բոլոր ցուցահանդեսներին: 1975թ. մասնակցում է Երևան-Մոսկվա-Լոս-Անջելես ցուցահանդեսին՝ անցնելով երեք բծախնդիր գեղխորհուրդների աչալուրջ քննությունը:

Նկարիչների միության անդամ դառնալը չափազանց դժվար ու պատվաբեր էր այդ տարիներին: Մի քանի փորձից հետո 1982թ. նրան հաջողվում է դառնալ այդ միության անդամ՝ ստանալով երկու տոմսեր (Գեղֆոնդի և Պետպատվերների), ինչը թույլ է տալիս նաև պետական պատվերներ կատարել:

Սաֆյանը կտավներում գովերգում էր կյանքն իր բոլոր դրսևորումներով. դա դժվարությունների միջով անցած մարդու աշխարհայացք է՝ ապրելու իմաստությամբ ու կյանքի ուժով առլեցուն. «Աշնանային հանգիստ», «Գյուղական կյանք», «Ջաջուռ» կտավ-

ներում նա, ասես, նորովի է բացահայտում ու գովերգում Հայաստանի գողտրիկ անկյունները՝ ստեղծելով կամերային, ընդհանրացված բնապատկերներ։

Դիմանկարների շարքը կատարված է նյութի զգացողությամբ ու բնավորությունների նուրբ մատուցմամբ. «Անահիտի դիմանկարը», «Գնչուհիներ», «Գուշակուհի», «Անահիտ», «Աշոտ»։ Մեր կարծիքով առավել հաջողված են Սաֆյանի նատյուրմորտները, որոնք վկայում են ճաշակի ու նյութի փայլուն տիրապետման մասին. «Հայկական նատյուրմորտ», «Կակտուս», «Երիցուկները», «Մանուշակները պատշգամբի վրա», «Ծաղիկներ»։

Բազմազբաղ դասախոսը, հմուտ տանտիկինը իր ուժերը փորձել է նաև քաղաքականության մեջ։ 1980թ. պոլիտեխնիկի հանրության կողմից նա ընտրվում է քաղխորհրդի պատգամավոր։ Այդ տարիներին քաղաքը ղեկավարում էր Դոնարա Հարությունյանը, որը մեծ գործունեություն էր ծավալել քաղաքի բարեկարգման ու վերափոխման գործում. Սաֆյանն առաջարկում է քաղաքի գեղագիտական բարեփոխման մի շարք նախագծեր։ Սակայն 1988թ. երկրաշարժը կասեցնում է բոլոր նորամուծությունները։

Սաֆյանի հետագա գործունեությունը կապված է բարեգործության հետ։ Հետերկրաշարժյան ցրտի ու խավարի տարիներին արտերկրում բնակվող բազմաթիվ ազգականները օգնություն էին ուղարկում, և Սաֆյանը այդ օգնությունը բաժանում էր համաքաղաքացիներին։ Շվեյցարացի ազգականի՝ Զատիկ Զեյդանի միջոցով Սաֆյանը աջակցում է 33-րդ դպրոցի կառուցման գործին (այն վերջին տնակային դպրոցն էր Գյումրիում)։ Դպրոցի կառուցման համար Շվեյցարիայում վաճառվում են Նվեր Սաֆյանի նկարներով 9000 օրացույցներ, որից գոյանում է 150 հազ. դոլարի հասույթ։ Նա այն ամբողջությամբ փոխանցում է դպրոցի կառուցման ֆոնդին։ Օրացույցները մակագրված էին «Նվեր Գյումրիին՝ Նվերից» խորհրդանշական տողերով։

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. 1950-1960-ականներին Լենինականում ապրել ու ստեղծագործել են սփյուռքահայ գեղանկարիչներ Հակոբ Հակոբյանը, Պետրոս Կոնտուրաջյանը և Նվեր Սաֆյանը։ Քաղաքի և հայրենադարձ նկարիչների փոխհարաբերությունը տարբեր է եղել. եթե Կոնտուրաջյանը մնացել է չհասկացված, ապա Հակոբյանը նորովի է բացահայտել իր տաղանդը, իսկ Սաֆյանը իր կյանքն ամբողջությամբ նվիրել է մանկավարժական գործունեությանը կերպարվեստի ոլորտում։ Նրանք իրենց կենսափորձով, գիտելիքներով, վարպետությամբ մեծ ավանդ են բերել Լենինականի կերպարվեստի զարգացմանը։

Գ ր ա կ ա ն ո ւ թ յ ո ւ ն

1. **Իգիթյան Հ.** «*Հովնաթանյանից Մինաս…*»: Երևան: «Տիգրան Մեծ» հրատ.: 2001: 340 էջ:
2. **Խաչատրյան Շ.** «*Կոնտուրաջյան Պ.*»: Երևան: «Սարգիս Խաչենց» հրատ.: 2011: 88 էջ:
3. **Սարգսյան Ա.** «*Լենդուտա, Զալոյան Վ.Քաղաքի ոգին և հիշողությունը*»: «Զանգակ»: 2016: 63 էջ:
4. **Միրզախանյան Ռ.** «*Խորհրդահայ մշակույթը 1956-1990թթ.*»: Երևան: ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.: 2009: 351 էջ:
5. **Иванов А.** "*Гюмри: Вернакуляр черного туфа*". Ереван. Изд. «Коллаж» 2021. 375 стр.

R e f e r e n c e s

1. **Igityan H.** "Hovnatanyan to Minas" ["*Hovnatanyanic Minas*"], "Tigran Mets", Yerevan, 2001, 340 p. (in Armenian)
2. **Khachatryan Sh.** "Konturajyan P" ["*Konturajyan P*."]. Yerevan: "Sargis Khachents" Publ. 2011: 88 p. (in Armenian@ English)
3. **Sargsyan A.** "Lenduta", [*Lenduta*] "Zangak"Publ., 2016: 63p. (in Armenian@ English)
4. **Mirzakhanyan R.** "Soviet Armenian Culture 1956-1990". [*Khorhrdahay mshakuyty 1956-1990tt.*]. Yerevan: "Science" Publ.of the National Academy of Sciences of the RA. 2009: 351. (in Armenian)
5. **Ivanov A.** "Gyumri: Vernacular of black tuff." [*Vernakulyar chyornogo tufa*], Yerevan. 2021. 375p. (in Russian)

Ընդունվել է / Received on: **07. 03. 2025**
Գրախոսվել է / Reviewed on: **16. 04. 2025**
Հանձնվել է տպ. / Accepted for Pub: **23. 05. 2025**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արաքս Վարդանի ՄԱՐԳԱՐՅԱՆ, արվեստագիտ. թեկնածու, դոցենտ,
ՀԳՊԱ Գյումրու մասնաճյուղի գեղանկարի և քանդակի ամբիոն,
Շիրակի պետհամալսարանի սպորտի ու արվեստի ամբիոն, Գյումրի, ՀՀ,
էլ հասցե՝ araxmargaryan@gmail.com // orcid.org/0009-0003-8523-0891

Arax Vardan MARGARYAN: PhD in Art Studies, Associate Professor,
Department of Painting and Sculpture of Fine Arts at the Gyumri branch of AA
Department of Sports and Art of the Shirak State University, Gyumri, RA
e-mail: araxmargaryan@gmail.com // orcid.org/0009-0003-8523-0891